ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌ 2023

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից՝ 2023թ. օգոստոսի 25-ին:

Որակի ապահովման բաժնի վարիչի ժամանակավոր
պաշտոնակատար՝ Հայրապետյան Ք.
մասնագետներ՝ Նախրատյան Մ.
Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **Հարցման ընդհանուր նկարագիրը 3**
2. **Հարցման մեթոդաբանությունը 3**
3. **Գործատուի կողմից ԳՊՀ-ի պրակտիկայի մասնակից ուսանողների մասնագիտական գիտելիքների եվ կարողությունների գնահատում.....4**
4. **Եզրակացություններ և առաջարկություններ.....14**

I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) կրթության որակի ներքին ապահովման առաջնահերթություններից է մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկանների ընթացքում ուսանողների մասնագիտական գիտելիքների ու կարողությունների գնահատումն արտաքին շահակիցների՝ գործատուների կողմից: Գնահատման արդյունքները թույլ կտան վերլուծել և ուսումնասիրել գործատուների բավարարվածությունն ուսանողների մասնագիտական պատրաստվածությունից, վերանայել ու բարելավել մասնագիտական կրթական ծրագրերը, նրանցում ամրագրված վերջնարդյունքները, ուսուցման մեթոդաբանությունը, ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը, տեղեկատվական համակարգերի հասանելիությունը, Գործատու-Համալսարան փոխհարաբերությունները, կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության արժանահավատությունը:

II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց, կիսաբաց և ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են Համալսարանի որակի ապահովման և արտաքին կապերի և լրատվության բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, որը միտված է ԳՊՀ-ում կրթության որակի բարելավմանը, դրանով իսկ՝ մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը, գործատուների բավարարվածության աճին:

III. Գործատուի կողմից ԳՊՀ-ի ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատում

ԳՊՀ-ի ուսանող պրակտիկանտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման վերաբերյալ հարցմանը մասնակցել են թվով 44 գործատուներ՝ հետևյալ կազմակերպություններից.

1. Գավառի ավագ դպրոց
2. Գավառի Գ. Մնացականյանի անվան թիվ 7 միջն. դպրոց
3. Գավառի Ս. Քոչարյանցի անվան թիվ 1 հիմն. դպրոց
4. Գավառի Ա. Իսակյանի անվան թիվ 4 հիմն. դպրոց
5. Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջն. դպրոց
6. Գանձակ գյուղի թիվ 1 միջն. դպրոց
7. Լճաշեն գյուղի միջն. դպրոց
8. Լանջաղբյուրի Վ. Ադամյանի անվան միջն. դպրոց
9. Ծովազարդ գյուղի միջն. դպրոց
10. Կարմիր գյուղի թիվ 2 միջն. դպրոց
11. Կարմիր գյուղի թիվ 1 միջն. դպրոց
12. Հայրավանք գյուղի միջն. դպրոց
13. Երանոս գյուղի թիվ 1-ին միջն. դպրոց
14. Աստղաձոր գյուղի միջն. դպրոց
15. Մարտունու Մ. Մելիք-Շահումյանի անվան թիվ 1 հիմն. դպրոց
16. Մարտունու Ս. Դարբինյանի անվան թիվ 2 հիմն. դպրոց
17. Նորատուսի թիվ 2-րդ միջն. դպրոց:
18. Նորատուս գյուղի թիվ 1 միջն. դպրոց
19. Նորատուս գյուղի թիվ 3 միջն. դպրոց
20. Ներքին Գետաշենի թիվ 1 միջն. դպրոց
21. Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան թիվ 1 միջն. դպրոց
22. Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան թիվ 2-րդ միջն. դպրոց
23. Սևան քաղաքի թիվ 1 միջն. դպրոց
24. Սևանի թիվ 4 հիմն. դպրոց

25. Վարսերի Ռ. Պետրոսյանի անվան միջն. դպրոց
26. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ
27. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարան
28. ՀՀ քննչական կոմիտեի Սևանի քննչական բաժին
29. ՀՀ քննչական կոմիտեի Մարտունու քննչական բաժին
30. ՀՀ քննչական կոմիտեի Երևանի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժին
31. ՀՀ քննչական կոմիտեի Վեդիի քննչական բաժին
32. ՀՀ ՆԳՆ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն
33. Գավառի ԲԿ ՓԲԸ
34. «ՄԱՇԽ» ՍՊԸ
35. «Արա-Արեգ» ՍՊԸ
36. «Արման Առաքելյան» ԱՁ
37. «Արարատ Գաբրիելյան» ԱՁ
38. «Գավառի ՀՀԳ» ՍՊԸ
39. Ինտերնետ կոմունիկացիոն ցանցեր
40. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» Հրազդան մասնաճյուղ
41. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
42. ՀՀ ՊԵԿ ՀՎԱՎ սպասարկման թիվ 10 բաժին
43. ՀՀ ՊՆ ՖԲՎ վարչություն
44. Հայփոստ ՓԲԸ Գավառ մասնաճյուղ

Հարցմանը մասնակից գործատուները հիմնականում ներկայացնում են Գեղարքունիքի մարզի աշխատաշուկան՝ դպրոցներ, համայնքապետարաններ, բանկեր, քննչական բաժիններ և այլ կազմակերպություններ, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ Գավառի պետական համալսարանը՝ որպես Գեղարքունիքի մարզում գործող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, իր հնգամյա (2023-2027թթ.) ռազմավարական ծրագրում ամրագրված առաքելությանը հավատարիմ, բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը կազմակերպում է մարզի առանձնահատկությունների և աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ:

Խնդրում ենք գնահատեք ԳՊՀ պրակտիկանտի(ների)

3.1.Մասնագիտական տեսական գիտելիքները.

Գծապատկեր 1.



Հարցվողների 62.9%-ը ԳՊՀ պրակտիկանտների մասնագիտական տեսական գիտելիքների պաշարը գնահատել է «գերազանց», հետևաբար՝ կարծում են, որ ԳՊՀ ուսանողները հիանալի տիրապետում են իրենց մասնագիտությանը, ունեն անհրաժեշտ գիտելիք, կարողություն, հմտություն: 33,9%-ը՝ «լավ»՝ ԳՊՀ ուսանողները լավ տիրապետում են իրենց մասնագիտությանը, սակայն որոշակի գործնական հմտությունների ձեռքբերման կարիք ունեն: 3,2%-ը /2 գործատու/ նշել է «բավարար» պատասխան: Բավարար պատասխաններ նշել են Սևանի թիվ 1 միջն. դպրոցը և ՀՀ ՊՆ ՖԲՎ վարչությունը:

Հարցին ի պատասխան «անբավարար» պատասխան չի գրանցվել:

3.2.Մասնագիտական գործնական հմտությունները.

Գծապատկեր 2.



Հարցվողների 43.5%-ը ԳՊՀ պրակտիկանտների մասնագիտական գործնական հմտությունները գնահատել է «գերազանց», իսկ 56.5%-ը՝ «լավ»: Բավարար և անբավարար պատասխաններ չեն գրանցվել:

3.3.Համակարգչային հմտությունները.

Գծապատկեր 3.



Հարցվողների 69.4%-ը պրակտիկանտների համակարգչային հմտությունների իմացության աստիճանը գնահատել է «գերազանց», իսկ 29.0%-ը՝ «լավ»: «Բավարար»՝ 1,6%-ը: «Բավարար» գնահատական նշվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Ա. Իսակյանի անվան թիվ 4 հիմն. դպրոցի կողմից: «Անբավարար» պատասխան չի նշվել:

3.4.Օտար լեզուների իմացությունը.

Գծապատկեր 4.



Հարցվողների 56.5%-ը ԳՊՀ պրակտիկանտների օտար լեզուների իմացության աստիճանը գնահատել է «գերազանց», 35.5%-ը՝ «լավ», 8,1%-ը՝ «բավարար»: «Բավարար» գնահատական նշել են.

- Կարմիրգյուղի թիվ 1 միջն. դպրոց,
- Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան թիվ 1 միջն. դպրոց,
- ՀՀ ՊԵԿ ՀՎԱՎ սպասարկման թիվ 10 բաժին
- ՀՀ ՊՆ ՖԲՎ վարչություն
- «Գավառի ՀՀԳ» ՍՊԸ

Անբավարար պատասխաններ չեն արձանագրվել:

3.5.Հաղորդակցական հմտություններ.

Գծապատկեր 5.



Հարցին ի պատասխան հարցվողների 56.5%-ը գնահատել է «գերազանց», 41.9%-ը՝ «լավ»: «Բավարար»՝ 1,6%-ը: «Բավարար» պատասխանը կրկին արձանագրվել է Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան թիվ 1 միջն. դպրոցի կողմից: Անբավարար պատասխաններ չեն արձանագրվել:

3.6.Գրավոր և բանավոր խոսքը.

Գծապատկեր 6.



Հարցվողների 82.3%-ը ԳՊՀ պրակտիկանտների գրավոր և բանավոր խոսքի հմտություններն ու կարողությունները գնահատել է «գերազանց», 17.7%-ը՝ «լավ»: Բավարար և անբավարար պատասխաններ չեն արձանագրվել:

4. ԳՊՀ պրակտիկանտները իրենց մասնագիտությամբ աշխատելու համար լրացուցիչ որակավորման կամ վերապատրաստման դասընթացների մասնակցելու կարիք ունե՞ն

Գծապատկեր 7.



Հարցվողների 8.1%-ը պատասխանել է «այո», 41.9%-ը՝ «ոչ», իսկ 50%-ը՝ «մասամբ»:

ԳՊՀ պրակտիկանտներն իրենց մասնագիտությամբ աշխատելու համար լրացուցիչ որակավորման կամ վերապատրաստման դասընթացների մասնակցելու կարիք հարցին հիմնականում դրական են պատասխանել հանրակրթության ոլորտը ներկայացնող գործատուները, որոնք վերապատրաստման դասընթացների շարքում կարևորել են հետևյալ առաջնահերթությունները.

1. իրենց մասնագիտության մեջ կիրառվող նորագույն մեթոդների ուղղությամբ,
2. համակարգչային ծրագրերի վերաբերյալ,
3. օտար լեզուների իմացության ոլորտում,
4. հաղորդակցման հմտություններ,
5. իրենց մասնագիտությամբ:

5. Հարցվող գործատուները ներկայացրել են նաև առաջարկություններ, դիտարկումներ ոչ միայն պրակտիկանտների վերաբերյալ, այև ԳՊՀ-ում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման և նոր կրթական ծրագրեր ներդնելու վերաբերյալ:

1. Օրենսդրության ակտերի իմացության անհրաժեշտություն:
2. Շրջանավարտներն ունեն փորձի պակաս, որը կլրացվի աշխատանքի ընթացքում:
3. Նախադպրոցական կրթական ծրագրի իրականացում:
4. Տեսական գիտելիքների և գործնական գիտելիքների անհամաչափություն:
5. Դասավանդման նորագույն մեթոդների բացակայություն:
6. Ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա կրթական ծրագրերի իրականացում:
7. Նորագույն մեթոդների շարունակական զարգացում և կիրառում:
8. Ուսանողների բավարար չեն տիրապետում համակարգչային ծրագրերին:
9. Ավելի շատ ուշադրություն դարձնել գործնական հմտություններին:
10. Համալսարանի կողմից տրված գիտելիքները գործնականում կիրառելու կարիք ունեն: Օրինակ՝ հաշվապահական ծրագրերի իրականացում, հարկային հաշվետվությունների կազմում և այլ:

11. Դպրոց-բուհ համագործակցության խթանում, բնագիտական ուղղվածության մասնագիտական կրթական ծրագրերի ներդնում:
12. Ուսանողների գործնական հմտությունների կարևորում:
13. Հանրակրթական դպրոցները «Ինֆորմատիկա» և «Երաժշտություն» առարկաների ուսուցիչների կարիք ունեն:
14. Բանկերում ՏՀՏ ոլորտի մասնագետների խիստ կարիք է զգացվում:
15. «Տեխնոլոգիա», «Կերպարվեստ» առարկաների ուղղությամբ համապատասխան մասնագետների կարիք է զգացվում, խնդրում ենք բուհում մասնագիտությունների ցանկը կազմելիս հաշվի առնել հանրակրթական դպրոցների պահանջները:
16. ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող նեղ մասնագետների՝ լոգոպեդ, հոգեբան, սուրդոմանկավարժ, կարիք կա:
17. ԳՊՀ-ում «Դեղագործական քիմիա» մասնագիտական կրթական ծրագրի համար անհրաժեշտ է մագիստրատուրա կրթական աստիճանը:

IV. Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ հարցմանը մասնակից գործատուները հիմնականում ներկայացնում են ՀՀ Գեղարքունիքի մարզի աշխատաշուկան՝ դպրոցներ, համայնքապետարաններ, բանկեր, քննչական բաժիններ մարմինները:

Հարցման արդյունքները ցույց տվեցին հետևյալը.

1. Հարցվողների 62.9%-ը «գերազանց» են գնահատել ԳՊՀ ուսանողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը:
2. Հարցմանը մասնակից գործատուների 8,1%-ը նշել է, որ ԳՊՀ պրակտիկանտները կարիք ունեն լրացուցիչ վերապատրաստումների՝ առաջնահերթություն տալով հետևյալ ուղղություններին.

- ✓ իրենց մասնագիտության մեջ կիրառվող նորագույն մեթոդների ուղղությամբ,
- ✓ համակարգչային ծրագրերի վերաբերյալ,
- ✓ օտար լեզուների իմացության ոլորտում:

Գործատուների կողմից ԳՊՀ-ի ուսանողներ պրակտիկանտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման և աշխատաշուկայի կարիքները բացահայտելու և ուսումնասիրելու համար կարևոր են նաև հարցաթերթի բաց հարցերը, որտեղ գործատուներն առաջարկում են հետևյալը.

1. Համալսարանի կողմից տրված գիտելիքները գործնականում կիրառելու կարիք ունեն: Օրինակ՝ հաշվապահական ծրագրերի իրականացում, հարկային հաշվետվությունների կազմում և այլ:
2. Դպրոց-բուհ համագործակցության խթանում, բնագիտական ուղղվածության մասնագիտական կրթական ծրագրերի ներդնում:
3. Ուսանողների գործնական հմտությունների կարևորում:
4. «Տեխնոլոգիա», «Երաժշտություն» «Ինֆորմատիկա», «Կերպարվեստ» առարկանների ուղղությամբ համապատասխան մասնագետների կարիք է զգացվում, բուհում մասնագիտությունների ցանկը կազմելիս հաշվի առնել հանրակրթական դպրոցների պահանջները:
5. ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող նեղ մասնագետների՝ լոգոպեդ, հոգեբան, սուրդոմանկավարժ, կարիք կա:

ԳՊՀ որակի ապահովման բաժինն ուսումնասիրելով հարցման արդյուքներն՝ առաջարկում է.

- Անգլերեն լեզու և գրականություն, Հայոց լեզու գրականություն կրթական ծրագրերը սպասարկող ֆակուլտետի, ամբիոնների կողմից վերանայել համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերը՝ ուշադրություն դարձնելով այն դասընթացներին, որոնք կնպաստեն մանկավարժական կոմպետենցիանների ձևավորմանը:
- Գործատու-Համալսարան համագործակցության շրջանակներում գործատուներին պարբերաբար հրավիրել Համալասարան կլոր սեղան քննարկումների, վերհանել և ուսումնասիրել այն խնդիրները, որոնք բացահայտվել են հարցումների ընթացքում:

Գավառի պետական համալսարանի ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների վերաբերյալ գործատուների կողմից լրացվող հարցաթերթի արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են

համապատասխան ստորաբաժանումներ (ֆակուլտետներ, ամբիոններ), որպեսզի ուսումնասիրվեն, ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի նիստերում ներկայացվեն համապատասխան լուծումներ և առաջարկություններ, ձեռնարկվեն միջոցներ՝ ուսուցման և ուսումնառության արդյունավետության ապահովման, ԳՊՀ-ում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերը բարելավելու և ԳՊՀ հիմնական արտաքին շահակիցների՝ գործատուների բավարարվածության աստիճանը բարձրացնելու, ԳՊՀ ուսանողների մրցունակությունն ապահովելու համար: